ՀԱՅԿԱԶԵԱՆ ՍՈՒՐՀԱՆԳԱԿ

2:0:0

ՊՕՂՈՍ ՊԷՑ ՏԱՏԵԱՆ ԵՒ Տ. ՅՈՎՀԱՆՆԵՍ ՅՈՆԱՆԵԱՆՑ.

Հայկազեան վարժարանը անցեայները մեծարեցաւ այցելութեամբերկուցմեծապատիւ ազգայնոց՝ որ մեր երկու գլխաւոր հայ գաղթականութեանց անդամբն են, Վս. Պօդոս Պեյ Տատեան իԿ. Պօլսոյ, եւ Տ. Յովհաննես Յոնանեանց իՄոսկուայե։

Այս երկու անունները քաջածանօթ են մեր ագգայնոց, եւ հայրենասիրական եւ հասարակաց ու առանձին բարերարութեանց յիշատակներ կզարթուցանեն, ուստի եւ աւելորդ կհամարիմք մեր այս երկու այցելուաց նկարագիրն ընել։

Պօդոս Պեյ Տատեան, Տաձկաստանի արքունի վառօդապետն, ու Տ. Յ. Յոնանեանց՝ Ռուսաց բանակին հանդերձապետը, որ իրենց հաւատարիմ գործովքը պատուեալ են վստահութեամբ Վեհ. Ինքնակալացն իւրեանց, գլուխ են այն երկու ազնուագարմ գերդաստանաց՝ որովք իրաւամբ պարծին մեր հայրենիքը։

Ազգային իրաց վրայ ունեցած իրենց փոյթն ու հոգը՝ հարկաւ գիրենք մեր մատադերամ մանկըտւոյն այցելութեան պիտի շարժեր ։ Եւ յիրաւի շատ անգամ հաձեցան գալ տեսնել մեր աշակերտները . եւ մեր սրբազան պարտուցը պակսած պիտի ըլլայինք եթե իրենց ցուցուցած սիրոյն վրայ շնորճակալութիւննիս հրապարակաւ չմատուցանեինը ։

Մեր խնամոցն յանձնուած սիրելի աշակերտաց ըրած յառաջադիմութիւնը, բարեկրթութիւնը, գըւարթադեմ առողջութիւնը, որով յայտնի կերեւեր թե վրանին որպիսի խնամք կտարուի, մեզի մեծամեծ գովութեանց եղեն առիթ ։ Այն խրախուսական վկայութիւնները այնբափ աւելի քաղցր են մեզ՝ որջափ աւելի անշաճասիրականք են եւ այնպիսի անձինքներե կուգան՝ որ այսպիսի նիւթի մը մեջ լաւ դատաւոր կարեն լինել ։

Ուստի թե վերատեսջացս կողմանե եւ թե մեր ազնիւ աշակերտացն անուամբ՝ կաղաջեմջ գՊօդոս ՊեյՏատեան, եւ զՏ. Ց. Ցոնանեանց՝ (ինջպես նաեւ զայն ամեն պատուաւոր ազգայինս՝ որ օր յաւուրց կճաձին իրենց սիրալիր այցելութեամբն եւ դրուատեշջ զմեզ պատուել) որ յօժարինընդունել մեր շնորճակալութեանցնճետ նաեւ մեր երախտազետ մեծարանաց լիշատակը ։

BOGHOS BEY DADIAN, ET M. J. ANANOFF.

Notre collége a été honoré ces jours derniers de la visite de deux des hommes les plus éminents de notre nation, appartenant à nos deux principales colonies arméniennes: M. Boghos Bey Dadian, de Constantinople, et M. Ohannès Ananoff, de Moscou.

Ces deux noms sont trop bien connus de nos compatriotes, il s'y rattache trop de souvenirs de patriotisme et de bienfaisance publique et privée pour que nous insistions sur le caractère des deux illustres visiteurs.

M. Dadian, directeur des poudrières de l'empire ottoman, et M. Ananoff, fournisseur de l'armée de S. M. l'Empereur de Russie, honorés tous deux de la confiance de leurs augustes Souverains, sont toujours les dignes représentants de ces deux grandes familles dont notre nation est fière à si juste titre.

Leur sollicitude pour tout ce qui a rapport aux Arméniens ne pouvait manquer de les porter à visiter notre jeune colonie. Plusieurs fois, en effet, ils ont daigné venir voir nos élèves, et nous croirions manquer au devoir sacré de la reconnaissance en ne rendant pas un hommage public à leur bienveillance.

Les progrès des chers enfants qui nous sont confiés, leur bonne tenue, l'état prospère de leur santé, témoignant des soins dont ils sont entourés, nous ont valu les plus grands éloges. Nous y avons été d'autant plus sensibles qu'ils étaient plus désintéressés et qu'ils venaient de deux hommes si bons juges en pareille matière.

Aussi sommes-nous heureux de pouvoir, tant en notre nom qu'au nom de nos chers élèves, prier M. Boghos Bey Dadian et M. Ohannès Ananoff (ainsi que tous nos honorables compatriotes qui veulent bien tous les jours nous honorer de leurs visites et nous encourager de leurs éloges les plus flatteurs), d'agréer avec nos remerciements l'assurance de notre gratitude et de notre précieux souvenir.